ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻՐԱՒՈՒՆՔ

# ԱՇԽԱՏԱՆՔ

ԴՐՈՇ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ՀՈՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ

Թիֆլիզում հասով՝ 7 կ. ԱՌԱՋԻՆ 1906 ՏԱՐԻ Այլ տեղերում գինն Լ՝ 8 կ.

№ 1 ԿԻՐԱԿԻ 22-ԻՆ ՅՈՒՆՈՒԱՐԻ № 1

## ԾՐԱԳԻՐ ԵՒ ՆՊԱՏԱԿ

—

Հայ պարբերական մամուլի ընտանիքին այսօրւանից յաւելանում է մի նոր անդամ. դա «Աշխատանքն» է։

Նա գալիս է աշխատելու մի դասակարգի համար, որը մինչև օրս դիտաւորեալ կերպով շղթայակապ բանտարկւած էր - քաղաքացիական բանտարգելութեամբ և կամայականութեան շղթաներով։ Դա աշխատաւոր դասակարգն էր և ամենից առաջ գիւղացիութիւնը իր ծայր աղքատութեամբ, իր անթիւ ցաւերով. Գիւղացիութիւնը՝ բազմատեսակ կարիքների ծանրութեան տակ ընկճուած, անտէրութեան մատնւած, սակայն իր անյետաձգելի պահանջներով։

Եթէ աչքի առաջ ունենանք այն փաստը, որ հայ աշխատաւոր մասսան-գիւղացիութիւնը կազմում է հայ ազգի 80—85 տոկոսը, որ այդ անագին զանգւածի կենդանի և թարմ ույժերը մինչև օրս քաղաքակրթական տեսակէտից մնացել են գրեթէ անարատ, այն ժամանակ պարզ կլինի մի օրգանի անհրաժեշտութիւն, որը վճռել է գործել այդ մասսայի համար մի կողմից որպէս նրա բերան միւս կողմից՝ որպէս սրտացաւ, կարեկից բարեկամ, ընկեր և գործակից։

Մեր պարբերական մամուլը, դպրոցը և ընդհանրապէս գրագիտութիւն ժողովրդականացնող օրգանները, բնական է, չէին կարող հաշուի չառնել այդ մասսան, որը ոչ այլ ինչ է եթէ ոչ ինքը ժողովուրդը. սակայն մի կողմից քաղաքական դիտումները միւս կողմից՝ գործօն ույժերի պակասութիւնը թոյլ չէին տալիս կենդանի խօսքին, ազատ, քննադատող մտքին մտնել հայ գիւղացիութեան ընդարձակ շերտերի մէջ գնելու, ուսումնասիրելու և մանաւանդ գործելու այն չափերով, որքան դա անհրաժեշտ էր։

Ահա թէ ինչու մեր ժողովուրդը և մասնաւորապէս հայ գիւղացիութիւնը այնքան յետ մնաց քաղաքներից, ուր կենտրոնացած էին մեր ողջ դրական ուժերը սկսած մամուլից, ընկերութիւններից, դպրոցներից և քաղաքակրթական այլ գործօններից։

Այո, սոսկալի փաստն այսօր այն է, և մենք խոստովանելու ենք հրապարակօրէն, որ մեր գիւղը յետ է մնացել և շատ յետ. շնորհիւ դրա գիւղացիական կեանքի լայն հրապարակի վրա միմեանց վրա կուտակուել են անթիւ ցաւեր, կարիքներ, այնքան որ նրանք այլևս չեն տեղաւորւում այդ տարածութեան վրայ և անհրաժեշտօրէն պահանջում են կարգաւորում, եթէ չենք ուզում, որ դրանք զօրեղ ռումբերի նման պայթեն՝ իրենց չորս կողմը անհելի աւերմունքներ առաջ բերելով։

Ինչու հեռուն գնանք, երբ այդ ռումբերից մէկը արդէն պայթել է, մի սարսափելի ռումբ, որը «հայ-թուրքական ընդհարումներ» քաղաքացիական անուան տակ, մեր մինչև օրս, բառ երևոյթին, խաղաղ երկիրը դարձրել է արեան, կոտորածի և տնտեսական արհաւիրքի մի ովկիանոս, որի ոչ սկիզբն է երևում ոչ վերջը։

Եթէ քաղաքական նախընթաց պայմանները այնպէս սոսկալի չլինէին մեր երկրի համար, եթէ դպրոց, իրաւունք, ազատութիւն նոյնքան խրախուսուած լինէին մեր կառավարութեան կողմից, որքան խրախուսուած էր բռնութի, գնդակի և թղթի իրաւունքը, եթէ ռուսիկանական պետութիւնը լինէր կիսով չափ գոնէ իրաւական պետութիւն և, սկսած գիւղական գրագրից մինչև կառավարչապետները չզբաղուէին ներքին քաղաքականութեամբ, այլ լինէին ժողովրդին և միմիայն ժողովրդին ծառայողներ—այն ժամանակ ժողովուրդ ինքն իր միջից կստեղծէր «Աշխատանքի» նման տասնեակ թերթեր...

Անցածն անցել է և պէտք է հաւատալ որ անցել է անդարձ... Հոկտեմբերի 17-ը մի բանալի էր, որը բերեց ժողովրդի գիտակից մասը բացելու այն վիթխարի բանտը, ուր դարերից ի վեր բանտարկուած էին հարիւր միլիոն ռուս աշխատաւոր հպատակները...

Բանտի դռները բաց են, թէև դրա դրան առաջ շարուած է սուինների մի անտառ, ատրճանակների և մտրակաւորների մի սպառնական բանակ և թնդանօթների ահաւոր բերանները նայում են բանտարկեալներին... բայց բանտը բացուած է—յետ դառնալ նորից այնտեղ անկարելի է, մնում է միայն միասին գրոհ տալ և դուրս գալ այդտեղից, այս անգամ արդէն որպէս ազատ մարդիկ և իսկական քաղաքացիներ, որոնք վերջապէս իրենց կեանքը իրենց ձեռքերով կարգաւորելու անհրաժեշտ պահանջն ունեն։

Մեր ժողովրդական մամուլը և նրա հետ միասին «Աշխատանքը» այժմ կոչուած են այդ նոր կեանքի խրախոյսը կարդալու, նրա շէնքը շինելու, նրան հիմնաւորապէս կարգաւորելու, իսկական աշխատաւորների ձեռքով, նրանց ճաշակով և միմիայն նրանց համար...

Ահա «Աշխատանքի» և ծրագիրը և նպատակը։

Ա. Ա.

---

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԽՕՍՈՒՄ Է...

Թալան, հրդեհ, կոտորած և ապա... աւերակներ, իսկ վերջը՝ գաղթ դէպի երկրի սպառնով տեղեր կամ արտասահման։

Ահա 1905 թուի ողջ Ռուսաստանի դրութիւնը, որը մի շարք անընդհատ սոսկալի պատկերների միջոցով շար է շար անցնում է մեր աչքի առաջ։
Այդ արիւնաներկ պատկերների մէջ յաճախ երևում են զօրքի նիզակներ, կազակների մտրակներ, թնդանօթներ և մի շարք գեներալ-նահանգապետներ-արտակարգ իրաւունքներով։

Սրանք բոլորն էլ ուղարկուած են «անդորրութիւն և ապահովութիւն մտցնելու» մրրկայոյզ երկրում։

Բայց... կարծես մի ճակատագրական զուգադիպութեամբ, բաւական է խաղաղարարներին երևալ մի տեղ և ահա կամ սկսում է, կամ վերանորոգւում կը թալանը և հրդեհը, աւերումները և ամենից առաջ՝ կոտորածները։

Այս է ասում իրականութիւնը, ազատարար շրջանի իրականութիւնը. թերթեցէք Ռուսաստանում հրատարակուող բոլոր լրագիրները, հաղորդակցութիւնները, ուր այնքան կրկնւում են «անկարգութիւնները ճնշւում են, երկիրը խաղաղւում է» բառերը։

Երկիրը խաղաղւում է...

Որպիսի երազական ցանկութիւն բոլորիս համար։

Բայց խաղաղւում է։

[illegible], որ տիրեաց հռովմէական, կեսարական այս հին և մինչ նոր քաղաքականութիւնը բաժանելով է ուզում տիրել-տիրապետութեան այդ ժանգոտած

digitised by A.R.A.R.@

գէնքով է խաղաղութիւն հաստատում ազգերի, ժողովուրդների մէջ։

Որպիսի երբուն խաղաղութիւն, անհաստատ, զուրկ արմատից, զուրկ գոյութեան իրաւունքից—սա պատմութեան արձակած վճիռն է, վճիռ, որ գալիս է հազարաւոր տարիների տարածութեան վրա ապրող մարդկութեան բերնից, վճիռ, որը գիտական ճշմարտութիւնների շարքն է անցել։

Պատմութիւն. բայց ապացուցւած է, որ պատմութիւնը կառավարութիւնների ամենաչսիրած առարկան է, մանաւանդ «պետական» անուն կրող մարդկանց համար։

«Բաժանիր, որ տիրես» ասում էր Թիւրքիան երկու դար շարունակ, ասում էր և... գործում էր և այսօր նրա 40 միլիոն հպատակներից մէկ ու կէս տասնեակն է միայն մնացել, այն էլ՝ ցեղձանաթելով կապւած... Իսկական սեպարատիզմի գաղափարը իրենք կառավարութիւններն են սերմանում հպատակների մէջ և վերջը ասում «դարձուր երեսդ ինձ, համբոյր դրոշմիր ճակատիս, երդւիր, որ դու ինձ սիրող... գերին ես»։

«Դու յոյն ես, դու բուլղարացի, դու սերբ, դու հայ» ասում է մէկը, «դու լեհացի ես, դու վրացի, դու հրեայ, դու հայ, դու թուրք» ասում է միւսը. և ասում է այնքան, մինչև որ բոլորը զգում են, որ իրենք ճիշտ որ այն են ինչ, որ նա չէր ցանկանում որ լինէին...

Դա բաւական չէ։

Նա ասում է «դու փաճառական ես, դու ազնւական, դու գործարանատէր դու գիւղական, արի, բարձրացիր ինձ մօտ—բաժանւիր այն մխորից, որը հոտած գիւղացի է, մերկ, կոպիտ բանւոր, մաքի և երազների անուրջներում ապրող ֆանտազեօր ինտելիգէնտ»։

Եւ աջակողմեանք-բարձրանում են վեր։ «Բաժանիր որ տիրես»։

Բայց ահա գալիս է պատմութիւնը, Նա բարձրանում է ամբիոն և, բացելով իր էջերը, կարդում է։

«Պազաքացիք և ընկերներ.

Նա կարդում է և քո առաջ անցնում են մարդիկ, ծանօթ դէմքեր, անուններ, երկիրներ, ազգեր. այստեղ նա պատմում է Սպարտայի մասին, Ներոնի, գոռոզ Հռոմի, Հերոդէսի մասին, երկար կանգ է առնում, վերածնութեան, գիւղացիական պատերազմների վրա, մանրամասն նկարագրում է մեծ յեղափոխութիւնը, յիշում է մեծ Նապոլէոնին, յուլիս 30-ը, 48 թւականը, 53-ը և վերջապէս կանգ է առնում 1904 և 1905 թւականների վրա. նրա դէմքը մռայլւում է, բայց ահա յիշեց նա հոկտեմբեր 17-ը և նրա երեսին խաղաց ժպիտը... բայց ոչ երկար...

Այստեղ պատմութիւնը իջաւ ամբիոնից... Ցածում կանգնածները միմեանց երես նայեցին, նրանք ճանաչեցին միմեանց և... ձեռք մեկնեցին։

Այլ ևս չկար ռուս, լեհացի, հայ, վրացի—բոլորը տեսան, որ իրենք քաղաքացիներ են այն երկրի, որը Սահմանադիր Ռուսաստան է կոչւելու.

Եւ ահա երրայրական գրկախառնութեան մէջ նրանք հանեցին իրենց գլխարկները... Օդը թնդաց յաղթական երգի ալիքներով.

Դա այն երգն էր, որ երգւել էր սրանից 117 տարի առաջ...

Պատմութիւնն էր դրա հեղինակը...

ԶԱՆԳԱԿ

## ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Որպէս ամբողջ Ռուսաստանում, այնպէս և մասնաւորապէս Կովկասում թէև ազգաբնակութեան ամենամեծ մասը գիւղացի տարրն է, որ սակայն ամենից ճնշուած և հարստահարուածն է իսկապէս, որովհետև դրա գոյութիւնը մինչև օրս աւելի շուտ պարտականութիւնների, քանթէ իրաւունքների մէջ է արտայայտւում։

Այլապէս չէր էլ կարող լինել ռատիկանական սիստեմի բիւրոկրատ կառավարութեան ժամանակ։

Մինչդեռ աններքելի փաստ է, որ գլխաւորապէս գիւղացիութիւնն է իւր ուսերի վերայ կրում ամբողջ պետութեան ծանր ֆինանսական և պատերազմական բեռը, նա է որ միաժամանակ գրեթէ միակ կերակրողն է միօլիոնաւոր պարազիտների, որոնց անհոգ և անվրդով կեանքը ապահովւում է միմիայն նրա աշխատանքով, իսկ ինքն ամենից քիչն է օգտւում իւր դառն աշխատանքի պտուղներից։

Տարօրինակ դասաւորումն սոցիալական պայմանների... ինչպէս [illegible]

Ոչ ոք այնքան ծանր աշխատանքի չէ մատնւած որքան գիւղացիութիւնը, բայց և ոչ ոք այնքան չէ վտանգւած սովամահ լինելու, որքան սա։ Գիւղացու բոլոր աշխատանքի հետևանքն այն է լինում, որ նա հազիւ հազ է կարողանում մի կերպ ապահովել իւր և իւրայինների գոյութիւնը։ Նա ոչ թէ աշխատում է բարելաւել իւր դրութիւնը, այլ միմիայն մի կերպ «ապահովել իւր գոյութիւնը». սորա կեանքը յիրաւի մի «գոյութեան կռիւ է» իր ամենանեղ իմաստով։

Նա տարւայ ամենամեծ մասը աշխատում է օրական շատ անգամ աւելի քան 16 ժամ և վերջ ի վերջոյ վստահ չէ, որ գոնէ չոր հացը նրան չէ պակասելու։

Այո, գիւղացին իրան հանգիստ է զգում միմիայն այն ժամանակ, երբ վստահաբար կարող է ասել, թէ ձմրան համար գոնէ հացի պաշար ունէ։

Այսպէս չէ մտածում Եւրոպայի գիւղացին։ Նա կռիւ է մղում ոչ թէ այդպիսի աղօրմելի կեանքի, այլ աւելի բարեկեցիկ դրութեան համար. նրա հոգսը ոչ թէ անասնական գոյութեան, այլ իրօք «մարդավայելչ

բ3-21

digitised by A.R.A.R.@

կեանքի համար է. Նրան նոյնքան է հետաքրքրում հացը, որքան և ուսումը, գեղարւեստը և առհասարակ հոգեկան հաճոյքը։

Ո՞րն է իսկական պատճառը մեր գիւղացիութեան այսպիսի դառը դրութեան։ Մեզ թւում է, որ ամենաէական և գլխաւոր պատճառներից մէկը անշուշտ պէտք է հողի պակասութիւնը համարել։

Ամբողջ Ռուսաստանում և մասնաւորապէս մեզ մօտ, առանց խտրութեան ազգութիւնների, բոլոր գիւղացիք տասնեակ տարիներ շարունակ միևնոյնն են գոչում. «հող, հող և հող». բայց և նրանց լսող չկայ, որովհետև մեզ մօտ որպէսզի բողոքի ձայնը տեղ հասնէր, անհրաժեշտ էր, որ նա ոյժ ունենար, իսկ այս համար հարկաւոր էր դրամ, գիրք, կապեր և հազար ու մէկ խորամանկ ճանապարհներ, որոնցից զուրկ է առանձին-առանձին վերցրած մեր գիւղացին։ Նա զուրկ է անգամ այն ոյժից, որ ներկայացնում էր աւելի ուշ և նոր յառաջ եկած բանւոր դասակարգը Ռուսաստանում. որը շնորհիւ իւր «միացած» գործունէութեան ամենափայլուն կերպով կարող է յառաջ տանել իւր պահանջները։ Նա մի մեծ ոյժ է, որի առաջ վաղ թէ ուշ կառավարութեան ամենառեակցիոներ տարրերը վերջապէս պէտք է խոնարհեն։

Գիւղացիութիւնը զուրկ էր այդպիսի մի գործօն մարմնից, մի ընդհանուր միութիւնից, որի միջոցով կարող լինէր արտայայտել իւր իրաւացի պահանջները դրական և ստիպողական կերպով։ Նորա դրութիւնը քանի գնում այնքան եւս անտանելի էր դառնում։ Բայց յեղափոխական յուզմունքը արդէն մտել էր ռուս մողովրդի ներքին խաւերը. և այդ քանի գնում այնքան որոշ և ակնյայտ էր դառնում։

Արտաքին և ներքին կռիւներով ուժասպառ կառավարութիւնը այլևս չունէր ոչ առաջւայ ոյժը և ոչ պրեստիժը, որ կարող լինէր սարսափ և երկիւղ տարածել հլու հպատակների սրտերում։ Ցուցւում և խըռովում է նաև երկրագործ գիւղացին։ Սոված և մերկ գիւղացու համբերութեան բաժակը արդէն լցւած էր։ Նա այլ եւս անկարող էր տանել իւր խղճալի կեանքը։

Յեղափոխական շրջանում նա այլ եւս հանգիստ աչքով չէր կարող նայել իւր իսկական թշնամուն, որին իւր թշւառութեան միակ պատճառն էր համարում նա։ Աւերւում, կողոպտւում, սրի և կրակի ճարակ են դառնում կալւածատէրերի, ֆերմերների ամբողջ գոյքը և ունեցածը. մահու վտանգի են ենթարկւում անգամ իրենք։

Ուշացած էր գիւղացու հարւածը, բայց աւելի ուժեղ, քան կարելի էր երևակայել։ Միևնոյն ժամանակ, որ ամենաէականն է, այդ հարւածը գիւղացիութեան իսկական թշնամիներից ամենագլխաւորին էր ուղղւած։

Կալւածատէրերը իրօք այն պարազիտ տարրն են ներկայացնում, որ միմիայն գիւղացու դառն աշխատանքի պտուղները վայելել գիտէ։ Նրանց անիրաւացի է պատկանում հողը, քանի որ նրա մշակողն ինքը չէ այլ գիւղացին։

Այսպէս է մտածում նաև գիւղացին առանց խըտրութեան սեռի և ազգութեան։

Գիւղացին շատ լաւ էր զգում, որ եթէ այդ լայնածաւալ և ձիգ կալւածներից մի չնչին, շատ չնչին բաժին տրւէր իրան, նա այն ժամանակ շնորհիւ իւր անխոնջ աշխատանքի կարող կը լինէր անպայման բարւոքել իւր դրութիւնը, որովհետև նորան այլ եւս չէին պակասիլ ոչ դրամ և ոչ աշխատաւոր ձեռք։ Նա շատ անգամ հարկերի և հազար ու մէկ տուրքերի, մանր տոկոսների և անընդհատ բարձրացող կալւածի կապալի համար ստիպւած էր լինում եզները, որդուն, կամ երկուսին միասին, աղջկան և հարսին այս ու այն կողմը, շատ անգամ հէնց իրենց կալւածատէրի մօտ ծառայութեան ուղարկել. դրամ, փող հայթայթելու. մինչդեռ ինքը կարիք և մեծ կարիք էր զգում աշխատաւոր, բանւոր ձեռքի։

Գիւղացին շատ լաւ էր տեսնում, որ այն ժամանակ երբ ինքը տանջւում, մաշւում, և շատ անգամ իսկ սովամահ էր լինում, կալւածատէրը հանգիստ սրտով շռայլում, վատնում էր նորա դառն աշխատանքի պտուղները։ Մի կողմից բարձր գլխըն ու պաշտօնները և սոցա հետ կապւած ահագին ռոճիկներն և հազար ու մէկ ծուռ ու մութ ճանապարհներով ստացւող վարձատրութիւնները, միւս կողմից անսահման կալւածները միանգամայն ապահովում էին նորան փայլուն, անվրդով կեանք։

Եւ երբ խեղճ գիւղացին անհաւասար ու ծանր աշխատանքից մաշւում և հիւծւում էր, աշխատանքի մասին գաղափար իսկ չունեցող կալւածատէրի եկամուտները բարդւում և գիզւում էին հէնց նորա խաղաղ և հանգիստ քնի ու նիրհի ժամանակ։

Եւ մինչդեռ ամիսներով սար կերակրի կարօտ և շատ անգամ դարի-հացով բաւականացող գիւղացին աշխատաւոր ձեռքի կարիքից ստիպւած և կամ ուսման վճար ներկայացնելու անընդունակ, անկարող էր լինում որդուն գէթ տարրական ուսում տալու, հարուստ կալւածատէրի լախտաւոր ժառանգը, տասնեակ հազարներ ծախսելով, շատ անգամ մաշում էր ռուս և օտար մայրաքաղաքների մայթերը և իւր առողջութիւնը. և երբեմնակի գիշերային քէֆերից և օրգիաներից թմրած գլխով այս կամ այն պրօֆէսորի դասախօսութիւններին լսել ձևի համար ներկայ լինում։ Եւ կամ որպէս սովորաբար մեզ մօտ է պատահում, միջնակարգ դպրոցներն իսկ չաւարտած, այս կամ այն ոստիկանական ու վարչական պաշտօնները ստանալով, մի նոր չարիք էր դառնում-ում... դարձեալ գիւղացու համար։

Կամ երբ ծանր աշխատանքից ու քաղցից ուժասպառ գիւղացի կինը վաղաժամ մահիճ էր մտնում, հարուստ կալւածատէրի կինն ու աղջիկը երևակայական հիւանդութիւնների և կամ նրբացած ստամոքսի բթացած ուժերը վերականգնելու պատրւակով ռուս և արտասահմանեան կուրօրտներում ֆլիրտներով էին

digitised by A.R.A.R.@

գրաւում։ Ճոխ և անհոգ կեանքին սովոր նոքա անկարող են բաւականանալ միևնոյն տեղով ու անձնաւորութիւններով. նոցա անհրաժեշտ է փոփոխութիւն... Ամառն ու աշունը նոցա բերում էին հրաշալի, սքանչելի ճանապարհորդութիւններ, ձմեռը՝ հոյակապ պալատներում անվերջ երեկոյթներ, ու պարահանդէսներ, որոնց համար նոքա պատրաստ էին տասնեակ հազարներ այս ու այն կողմը շպրտելու, առանց մտածելու, որ նոցանից ոչ շատ հեռու ցածր, նեղ ու խոնաւ խըրճիթներում, կամ նկուղնայարկներում տասնեակ մարդիկ խեղդւում էին ծանր օդից ու հոտից, մեռնում էին ցրտից, քաղցից ու սովից։

Եւ այսպէս մաշւում և կորստւում էին նոքա, որոնք իսկապէս իրաւունք ունէին ապրելու։ Կալւածատէրին նոցա կեանքը չէր հարկաւոր, այլ նոցա «աշխատանքը»։ Գիւղացին փոխարինում էր մեքենայի ու գործիքի։ Կընկնէր մէկը, նորան կը փոխարինէր միւսը։ «Հողը» և «կապիտալը» այն նշանաւոր և զօրեղ մագնիսն էր, որ միշտ կը քաշէ դէպ կալւածատէրը հազարաւոր բանւոր ու աշխատող գիւղացու։ Չէ որ խեղճն ու աղքատն էլ ապրել է կամենում։ Ստամոքսը պահանջում էր իւրը, որքան էլ թանկ և ծանր նստէր գիւղացուն։

Գիւղացին շատ լաւ էր հասկանում, որ անարդարացի և անիրաւացի էր իւր կալւածատէրն, որ անընդհատ բարդում էր իւր պահանջները, սակայն մինչև այժմ նա ոչ մի գրական միջոց չէր ձեռք առնում այդ սոսկալի անարդարութեան վերջ դնելու համար։ Նա շատ անգամ հարց էր տալիս իրան, թէ ինչու ինքը պէտք է աշխատէր ու տանջւէր, իսկ իւր դառն աշխատանքի պտուղները վայելէր մի ուրիշը։ Նա շատ լաւ էր տեսնում, որ ամեն մի կալւածատէր մի պարազիտ էր, որ քամում էր իրանից իր վերջին հիւթը. բայց և այնպէս լռում էր։ Այդ էին սովորեցնում նրան հոգևորականներն և ինքնակալ պետութեան միւս բոլոր ագենտները։

Եւ նա մինչև օրս հնազանդւում էր դառը ճակատագրին։

Սակայն չկայ ոչինչ անփոփոխ աշխարհիս երեսին. փոխւում է վերջապէս նաև գիւղացու աշխարհահայեցողութիւնը։

Նա տեսնում և լսում էր անընդհատ, թէ ինչպէս կամաց կամաց գլորւում և ջախջախւում էին այն բոլոր մարդիկ, որոնք մինչև այժմ անհասանելի բարձրութեան վերայ կանգնած, խեղճի և թշւառի տնտեսական դրութիւնը օրէցօր աւելի և աւելի էին քայքայում։

Թոյլ և համր մնալ այլևս նա չէ կարող. և նա դէն է շպրտում հլու հպատակութեան ծանր շղթաները։ Եւ երեկւայ հեզ և խոնարհ գիւղացին այսօր ոտքի տակ է տալիս կալւածատէրի դարաւոր «ապօրինի» և «անիրաւացի» իրաւունքները։—Սակայն որքան նա հեզ և խոնարհ էր, այնքան այժմ կատաղի և յանդուգն է։ Անսահման կատաղութիւնից ու զայրոյթից կուրացած, նա մէկ հարւածով կամենում է ոչնչացնել այն ամենը, որ կալւածատէրի հետքերն է կրում...

Սորանով են սկսւում գիւղացիական շարժման արիւնաներկ պատմութեան էջերը։ Որին կ՚անցնենք այլ անգամ։

S. A.

## ԱՆՑԱԾ ՏԱՐԻՆ

Անցեալ 1905 թիւը գիւղատնտեսական արդիւնաբերութեան կողմից ընդհանուր առմամբ բարեյաջող էր Անդրկովկասի համար։

Ժամանակին եկած գարնանային անձրևները շատ նպաստաւոր եղան հացաբոյսերի համար ցորեն, գարի համար ունեցան թէ լաւ ցողուն և թէ լիքը հասկեր. հունձը սկսեց իր ժամանակին, որին նպաստեց չորութիւնը և մանաւանդ լաւ եղանակները կալսելու ժամանակ։ Շիրակ, Արան, Արաքսի հովիտը Երևանեան նահանգում, որպէս և Գանձակի նահանգի մեծագոյն մասը ունեցան լաւ հունձ։

Բրնձի և բամբակի բերքը նոյնպէս առատ էր և տեսակով բարձր.

Խաղողի բերքը համեմատաբար թոյլ էր գրեթէ ողջ Անդրկովկասում. շնորհիւ ամառային չոր եղանակների օիդիում և միլդիու հիւանդութիւնները չվնասեցին խաղողին։

Միակ և ամենամեծ չարիքը արդիւնաբերող ազգաբնակութեան համար հայ թուրքական ընդհարումներն էին. որոնք ժողովրդին պահելով մշտական ահի և սարսափի մէջ, խանգարում էին նրան ջրել, հնձի և ծեծելու մասին հոգ տանել. մանաւանդ ծանրացաւ դրութիւնը աշնանը, երբ պէտք էր նախ՝ բամբակն ու բրինձը ժողովել և ապա՝ աշնանացան անել։ (Զանգեզուրի, Ջիւանշիրի, Շուշու և Նախիջևանի) գաւառներում աշնանացանը կատարւեց սովորականից շատ պակաս, բամբակի և բրնձի հունձը տեղ-տեղ նոյն իսկ անհնար եղաւ ժողովել. միւս գաւառներում աշնանային պարապմունքները առաջ գնացին թոյլ-դանդաղ նոյն պատճառներով։

Մանաւանդ վնասւեց անասնապահութիւնը մեր երկրի այն մասերում, ուր սուր կերպարանք էին ստացել հայ-թուրքական ընդհարումները. եզ, ոչխար, նախիրներ հազարներով քշւում, տանւում էին թուրքերից՝ մեծ մասամբ անվերադարձ։ Այդ կողմից ահագին կորուստ ունեցաւ կաթնատնտեսութիւնը Բորչալուի գաւառում, ուր նա կենդրոնացած էր։ Կաթնատնտեսական գրեթէ բոլոր հայ ֆերմաները թուրքերի կողմից թալանի և կրակի զոհ դարձան. վնասները այնքան մեծ են, որ հազիւ թէ կաթնատնտեսութեան զարգացող գործը գոնէ հայերի ձեռքով նորից ոտքի կանգնի այսահետ։

Ընդհանուր առմամբ մեր երկրի արդիւնաբերական կեանքը այս 1906 թուին մեծ վտանգի մէջ է,

digitised by A.R.A.R.@

ղըութիւնը զառնում է ծանր ժանւաւանդ այն պատճառով, որ երկիրը անտէր է և աշխատանքը վտանգւած։

Մենք զաւառական մեր թղթակիցների միջոցով «Աշխատանքի» էջերում պարբերաբար կտանք մեր երկրի զանազան մասերի արդիւնաբերական կեանքի ճշգրիտ պատկերը։

### Կ Ը Տ Է Ն Ի

Նոր լուսացած Սանդուխտ նանը
Ձէն է տալիս ծերուկ պապը.
«Ա հայ, վեր կաց, էսօր տանը
Ալիւր չունենք ոչ մի հափուռ»։

Տընքտընքալով ծերուկ պալին
Բընատեղից վեր է կենում,
Ալրի տոպրակ կըռան տակին
Դէպի ջուկան է նա գընում։

Ու տոպրակը կապած բեռնից
Շալակում է, տուն է գալիս,
Ծերուկ ճակատի խորշոմներից
Քրտինքըն է ծոր-թափ տալիս։

Նանը չուալ կապն է բացում,
Ալիւրն ածում մեծ տաշտի մէջ,
Տըխտըմօրում, խըմոր հունցում,
Գնւլեր անում, շարում անվերջ։

Ապա բերում ճախի կապեր
Թօրոն վառում ճըրճըրթալի,
Մինչդեռ անկիւն քաշւած պապեր
Իր չիբուխին է զոռ տալի։

Նանը թօրնի կողքին նըստած
Գոգնոց կապած, կըռներ քըշտած՝
Գնւլն է առնում երկու ափին—
Ու թափ տալով, զարնում տեճափին։

Բայց ծալ-պիւլը թօրնի եալին
Կըպած մընալ չի կարենում,
Մէկ էլ տեսար թըրըմփալին
Մոխրի մէջ է նա գըլորւում։

«Վիրբու կորեմ, նանն է ասում,
Հացս, մյախ, ճիլ է ընկել,
Աչքը դուրս գայ Մայան պառւն—
Թօրնի հերթից նա է զըրկել»։

Ախ է քաշում, բայց ինչ անի.
Երկու թօրոն ալւան հացեր
Դիփ դարձել են կոնդ-կըռէկնի,
Քերինչներն են լոկ մընացել։

«Ա զըաթըդ խէր, ա հայ, լինի,
Չէիր կարող ալիւր բերել,
Բերած ալիւրդ հենցա լինի
Կորեկ, գարի, զըըղըղալի»։

Քանի այսպէս նանն է լալիս
Անա տուի ձայն է գալիս.
Մօտեցողն է ժամհար Մօսին,
Փայտը ձեռքին խուրջինն ուսին։

«Ղօրմի Աստւած. Սանդուխտ նանի,
Ժամը պըրծաւ, նոր եմ գալի,
Թաժա հաց բեր Մօսին տանի,
Արքայութիւն հոգուդ լինի»։

Նանն ընտրում է լաւ կըռէկնին,
Տալիս նորան հոգու բաժին.
«Էս օր ժամ չեմ գընացել ես—
Ինչ՛կ հոգիս փըրկւի այսպէս»։

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

### ԶԵՄՍՏՎՕՅԻ ՇՈՒՐՋԸ

Անդրկովկասում զեմստվային ինքնավարութիւն մտցնելու հարցը լռեց, մինչև որ կը կազմակերպւի համառուսական Պետական Դուման, ուր ժողովրդի բոլոր խաւերի կողմից ընտրւած ներկայացուցիչները կորոշեն թէ երկրին ինչ ձևի ինքնավարութիւն է հարկաւոր։

Որպէս լուսաբանութիւն այդ կարևոր հարցի աւելորդ չենք համարում ծանօթացնել Աշխատանքի ընթերցողներին գիւղատնտես պ. Ա. Սահակեանի կարծիքի հետ, որ նա յայտնել է անցեալ 1905 տարի յուլիս ամսի 19-ին փոխարքայի պալատում, ուր հրաւիրւած էին խորհրդակցութեան հասարակական զանազան մարմիններ և ներկայացուցիչներ։

«Ձերդ պայծառափայլութիւն, համաձայն Թագաւորի կամքի դուք հրաւիրեցիք մեզ տեղական գործիչներիս, որպէսզի մենք ձեզ օգնենք կեանքի մէջ մտցնելու՝ զեմսկի տնտեսութեան բարենորոգումները Կովկասում։ Անկասկած, զեմսկի ռեֆորմը

digitised by A.R.A.R.@

հիմնական և ահագին նշանակութիւն ունի հասարակական, տնտեսական կեանքում, և մեր երկրի ազգաբնակութիւնը վաղուց ծարաւի է դրան։

Զեմսկի ինքնավարութեան հարցը ոչ միայն հասունացել է մեզնում, այլ նոյն իսկ անցրել է հասունութեան շրջանը։

Որչափ և մեծ է զեմսկի բարեփոխութեան նշանակութիւնը, սակայն միմիայն այդ բարեփոխութիւնը բաւարար չէ խաղաղացնելու մեր երկիրը և վերածնելու ազգաբնակութեան կեանքը իր ողջ ծաւալով։ Անհրաժեշտ են մտցնել մի շարք այլ ռեֆորմներ՝ հողային, դատաստանական, դպրոցական և այլն, որպէսզի կարելի լինի դնել մեր երկիրը Ռուսաստանի միջին նահանգների հետ հաւասար պայմանների մէջ։ Մեր դէպի պետութիւնը և ազգաբնակութիւնը ունեցած պարտքը պարտաւորեցնում է մեզ նուիրել մեր ողջ ոյժը իրականացնելու մի խոշոր բարենորոգում, սակայն դրա համար ամենից առաջ անհրաժեշտ է մեզ համոզուել, որ ձեր դիւանատան մէջ խմբագրուած միջոցներն ու ծրագիրները նպատակայարմար են։ Որպէս երևում է մեզ առաջարկուած գրութիւնից, զեմսկի տնտեսութիւն մտցնելու ռեֆորմի հարցը պէտք է յանձնուի գաւառական և նահանգական կալուածատէրերի, գիւղացիների և քաղաքացիների կողմից ընտրուած ներկայացուցիչների քննութեանը՝ և գաւառական նահանգական համաժողովներում։

Քննութեան այդպիսի եղանակը չի համապատասխանում ինքնավարութեան մեծ գաղափարին և յաջողութիւն չէ խոստանում։ Զեմստվօն լինելով իւր էութեամբ դասակարգերից դուրս և համաժողովրդական մարմին, շօշափում է ազգաբնակութեան բոլոր շերտերի շահերը։ Դրա համար էլ զեմսկի հարցի քննութեան գործին պէտք է հրաւիրուեն մասնակցելու նաև բոլոր քաղաքացիք, արհեստաւորները, բանւորները, այսինքն ազգային բոլոր խաւերը առանց բացառութեան։

Դա միակ ճիշտ միջոցն է իմանալու ժողովրդի կարծիքը զեմստվոյի մասին։ Օգնել ազգաբնակութեանը, լուծելու նրա կեանքի ամենահրատապ խնդիրներից մէկը—մեր ինտելիգենցիայի սրբազան պարտականութիւնն է։ Իսկ այդ պարտականութեան իրագործման և ազգաբնակութեանը ընդարձակ օգնութեան գալ, հնարաւոր է միայն այն դէպքում, երբ թոյլ կտրուի ինտելիգենցիային, անարգել կերպով մտնել ազգաբնակութեան մէջ՝ անձի անձեռնմխելիութեան, ժողովումների, խօսքի և մամուլի ազատութեան պայմանով։ Գալով 1863, 1890 և 1903 թուերի զեմստվային օրէնսդրութիւններին, որոնց հիման վրայ ներկայումս զեմստվօները Ռուսաստանում գործում են, պէտք է ասել, որ սրանցից և ոչ մէկը կարող է բաւարարութիւն տալ հասարակական և քաղաքական կեանքի ժամանակակից պահանջներին։ Կեանքը վերջին ժամանակներում առաջ է գնացել արագօրէն, ազգաբնակութիւնը հասունացել է ոչ միայն տեղական լայն ինքնավարութեան համար, այլ և պետականի։

Այժմ զեմսկի օրէնսդրութիւնը անհրաժեշտօրէն պէտք է հիմնովին փոփոխութեան ենթարկուի։ Թէ ո՛րոնք են լինելու այն փոփոխութիւնները, որ հասունացան հասարակական գիտակցութեան մէջ հոկտ. 17-ի հրովարտակից յետոյ և ինչ եղանակով են կատարուելու, այդ թողնենք ձևակերպելու իրեն ժողովրդական ներկայացուցիչներին, որոնք պէտք է ընտրուեն ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ձայնատւութեամբ, երբ որ գումարուի Սահմանադիր ժողովը։

## ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԸ ՄԻԱՆՈՒՄ ԵՆ

Մոսկւայում տեղի ունեցած համառուսական գիւղացիական ժողովում, ընդհանուր Ռուսաստանի երկաթուղային միութեան կենտրոնական բիւրոյի ներկայացուցիչը հետևեալ ողջոյնը ուղղեց համաժողովին։

«Մեր միութեան կենտրոնական բիւրոյի անունից ողջունում եմ Ձեզ, ընկերներ։ «Հող և Իրաւունք» ձեր նշանաբանի մէջ Ռուսաստանի փառաւոր ապագան է ներփակուած։ Մենք ազատութիւն կստանանք միմիայն այն ժամանակ, երբ այդ նշանաբանը կիրականանայ կեանքի մէջ։ Մեր միութիւնը ողջունում է ի դէմս ձեր՝ նոր և ուժեղ մի կազմակերպութիւն և ցանկանում է ձեզ հետ ձեռք ձեռքի տուած, միացած առաջ գնալ, որպէս զի այդ միութեան մէջ զօրեղացնի իր ոյժերը գոյութիւն ունեցող կարգ ու կանոնի դէմ յայտարարած իր կռւի ժամանակ»։

«Русское Слово»

## ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Անդրկովկասի հայ ազգաբնակութեան ահագին տոկոսը կազմում է գիւղացիական դասակարգը, որ ապրում է իր բնորոշ սոցեալ-տնտեսական պայմաններում։ Բաղկացած լինելով զանազան կատեգորիաների գիւղացիներից, այդ դասակարգը

digitised by A.R.A.R.@

զանազան հայկական գաւառներում ներկայացնում է տարբեր հողատիրական-իրաւական յարաբերութիւնների ձևեր։ Այս ձևերը, ժամանակի ընթացքում, առաջ ընթանալով տնտեսական էվօլիւցիօնի ճանապարհով, այժմ ենթակայ են քայքայման։ Կապիտալի ու արդիւնաբերութեան նուաճողական յարձակումը յեղաշրջում է այսօր Կովկասի տնտեսական կեանքը, նրա արտադրողական եղանակները։ Եւ ահա գիւղացու աշխատանքի ու հողատիրական իրաւունքի ներկայ ձևերը, որոնք այնքան քնքշութեամբ փայփայւում, հովանաւորւում են ռուս բիւրօկրատեայի մեռցնող րէժիմի շնորհիւ, այլ ևս չեն համապատասխանում արդի սոցեալ-տնտեսական զարգացման պահանջներին և դարձել են մի անախրօնիզմ՝ գիւղական հիւծւող կեանքում։ Բնական է, որ զարգացման այսպիսի աննորմալ պայմաններում գիւղական դասակարգի կեանքը ենթարկւում է ալեկոծումների, որոնք այս ու այնտեղ բռնկում են անզուսպ կրքերով։ Ստեղծւում է մի դրութիւն, որի սոսկալի պատկերը մի սովորական երևոյթ է դարձել Ռուսաստանի սոցեալ-տնտեսական պատմութեան մէջ։

Ահա մեր գիւղացիական դասակարգի այդ տխրալի դրութիւնը, որ պատմական անհրաժեշտութեամբ առաջ է եկել կովկասեան իրականութեան մէջ, երբէք լուրջ ուշադրութեան առնուած չի եղել հայ գրականութեան, մանաւանդ հայ ընթացիկ մամուլի կողմից։ Կարծես, ներբողներ գրելով հայ գիւղացու նահապետական նիստ ու կացի մասին, կամ արձանագրելով հայ գիւղացու արտաքին դրութիւնը, նրա բերքի ու տնտեսական կարիքների վերաբերեալ չոր ու ցամաք տեղեկութիւնները, բաւական են որոշ գաղափար կազմելու հայ շինականի սոցեալ-տնտեսական պայմանների մասին։

Այս փաստը մեզ զարմանալի չի թւում, երբ նկատի առնենք, թէ մեր մամուլը որքան խղճալի, ողորմելի պատկեր է ներկայացրել իր անցեալով։ Մի մամուլից, որի հրապարակախօսութիւնը փրփուրը բերանին միայն դպրոցական—հոգաբարձական, եկեղեցական — քահանայական հարցեր արծարծելով, երևակայում էր, թէ լուրջ սոցեալ-հասարակական խնդիրներ էր լուծում, թէ հայ քաղաքակրթութիւնն էր առաջ մղում, այդպիսի մի մամուլից աւելին չէր կարելի սպասել։ Հասարակական կեանքի երևոյթները ուսումնասիրելու համար անհրաժեշտ է վերլուծել նրանց զարգացման պայմանները, վերլուծել նրանց գոյութեան պատճառական կապերը։ Հայ մամուլը միշտ ընթանում էր դուրս, հեռու մեր իրականութիւնից. իսկ հասարակական, սոցեալական կեանքը առաջ էր քաշում իր պատմական ընթացքը թողած ինքն իր բաղդին, աննկատելի մեր հրապարակախօսների ու հասարակական գործիչների «սուր հայեացքներից»։

Ի՞նչով բացատրել մեր գրականութեան ու պարբերական մամուլի այդ տեսակ վերաբերմունքը, այդ դատապարտելի ըմբռնումը սոցեալ-կուլտուրական հարցերի շրջանում։

Մեղանում բացակայում էր քննական—վերլուծական մեթոդը. մեր մամուլի օրգանները զուրկ են եղել որոշ աշխարհայեացքներից, որոշ հասարակական սկզբունքներից, որոնք հիմնուած լինէին իրականութեան ուսումնասիրութեան ու ժամանակակից գիտական-փիլիսոփայական գաղափարների վրայ. սկզբունքներից, որոնք բղխէին որոշ սոցիօլօգիական առաջադրութիւնից։ Ո՞ւմ համար գաղտնիք չէ, որ մինչև օրս մեր մամուլի նոյն իսկ յառաջադէմ օրգանները չեն ունեցել ոչ մի որոշ տնտեսական ծրագիր, չեն պարզել իրենց համար մեր հասարակական յարաբերութիւնների փոխադարձ առնչութիւնները ժամանակակից սոցեալ-տնտեսական պայմանների վերաբերմամբ և չեն բնորոշել այն տարրական պահանջները թէ՝ ժամանակակից տնտեսական կազմի մէջ պէտք է վերացնել բոլոր խոչնդոտները, որոնք խանգարում են երկրի արտադրողական ոյժերի զարգացմանը։ Ուստի և չէին ուսումնասիրում մեր երկրի ոչ միայն ընդհանուր սոցեալ-տնտեսական դրութիւնը, նրա զարգացման պայմանները ոչ միայն չէին առաջադրում դրա համեմատ հասարակական ու տնտեսական յառաջադիմութեան ծրագրներ, այլ և մեր ժողովրդի այն մեծ դասակարգը, որը ներկայացնում էր գիւղացիականութեամբ, մնում էր իր սոցեալ-տնտեսական դրութեամբ և իր կեանքի զարգացման պատմութեամբ մի terra incognita հայ մտաւոր աշխարհի համար։ Եւ ահա մենք կրում ենք այդ դատապարտելի մամուլի ու գրականութեան գործունէութեան պտուղները։

Այսօր, երբ ամբողջ Ռուսաստանն և նրա

digitised by A.R.A.R.@

հետ միասին Կովկասի բովանդակ հին շէնքը կազմալոյծ է լինում, երբ ժողովրդի զանազան հասարակական դասակարգեր ասպարէզ են գալիս չափելու իրանց գոյութեան ուժերն ու պաշտպանելու իրենց հասարակական իղէալները, հայ պրօլետարիատի հետ բազմութիւնը՝ հայ գիւղացիութիւնը մտնում է իր տարրէրքային ուժերի անկանոն ընթացքին, զուրկ է կազմակերպուած գործունէութիւնից և անհրաժեշտ իդէօլօգիականներկայացուցիչներից։ Ի՞նչ դեր է խաղալու հայ գիւղացիութիւնը թէ ընդհանուր Կովկասեան և թէ հայ հասարակական շրջանում. ինչ տնտեսական-սօցիալական պահանջների minimum կարելի էր առաջադրել գիւղացիական կեանքի ներկայ իրականութեան րէալ պայմանների նկատմամբ. ինչպէս լուծել այն Գորդեան հանգոյցը, որ ստեղծւել է կալուածատիրական ու շինական հողատիրական քաղաքականութիւնից և որը դարերով տանջել, տոչորել է հայ գիւղացուն, ինչ ճանապարհով վերջապէս ոչնչացնել, մաքրել այն սրուած յարաբերութիւնները, այն վիհը, որ փորել է Կովկասեան բիւրօկրատիայի մաքիավելական քաղաքականութիւնը հայ գիւղացու և միւս հարևան ազգութիւնների գիւղացիութիւնների միջև. այս և նման մի շարք կենսական հարցեր, որպէս եգիպտական սփինքսներ, անպատասխան և լուռ կանգնած են հայ իդէօլօգների առաջ, որոնք միայն այժմ են սթափւել, արթնացել, երբ պատմական այս մօմենտին հարկաւոր էր կազմ ու պատրաստ լինել, հարկաւոր էր հանդէս գալ զինուած որոշ սօցիալական ծրագրներով։ Ներկայ լուրջ բոպէին հայ մամուլը և հայ ինտելլիգենցիան կանգնած են միանգամայն անջատուած հայ գիւղացիութիւնից, որովհետև նրանք մինչև վերջին ժամանակները չմօտեցան նրան, չծանօթացան նրա կեանքի, նրա աշխարհայեացքի հետ, նրա հասարակական գոյութեան ու զարգացման պայմանների հետ։ Հայ ինտելլիգենցիան չփայփայեց այդ իդէալներն. հոգի ու մարմին չուեց այն տենչանքներին ու բաղձանքներին, որոնք տրամաբանօրէն ծագում էին հայ գիւղացիական կեանքի իրականութիւնից։ «Հողը և ազատութիւնը» կայր հնչիւններ էին հայ գիւղացիութեան իդէօլօգների համար, որոնք լցնում էին հայ գրականութեան էջերը իրենց ուղեղի ողորմելի արտադրութիւններով, իրենց նեղ բուրժուազական աշխարհայեացքի գոհարներով։ «Հող և ազատութիւն» նշանաբանի իմաստը կարող էր ըմբռնել գիւղացին՝ շինական պրօլետարը, որը տեսնում էր, թէ ինչպէս իր աշխատանքի պտուղները վայելում են տիրապետող կալուածատէր դասակարգը և սրա թիկունքին յենուած կառավարութիւնը՝ յանձին իր բազմազանց բիւրօկրատիայի, որ գիտէ այնպէս վարժ ծծել ժողովրդի կենսական ուժերը։

Սակայն այժմ վերջապէս, երբ Կովկասը, միանալով ընդհանուր Ռուսաստանի շարժման հետ, գտնւում է ալեծուփ, երերուն վիճակի մէջ, երբ ժողովուրդները, բարձրացնելով իրենց գլուխները, կռիւ են մղում հին ռէժիմի դէմ և պատրաստւում են ապագայ վերածնուած Ռուսաստանի համար, անհրաժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել հայ գիւղացիական դասակարգի վրայ, առաջադրել որոշ հողատիրական—տնտեսական ծրագիրներ, որոշ սօցեալ-կուլտուրական աշխարհայեացք, հիմնւելով հայ գիւղացիական իրականութեան ուսումնասիրութեան վրայ։

Մենք համոզուած ենք, որ այժմ անցան գնացին այն օրհնուած ժամանակները, երբ մեր մամուլը մանկական թոթովանքներով էր խօսում հասարակական բարդ հարցերի ու խնդիրների մասին և իր միամիտ եզրակացութիւններով առաջնորդում հասարակական կարծիքը։ Անցան այն ժամանակները, որովհետև այժմս ասպարէզ է եկել ինտելլիգենտների ու թարմ ուժերի մի նոր սերունդ, որը գիտական պաշարով զինուած, մտքի մեծ վարպետների գաղափարներով ու հասարակական առողջ իդէալներով տոգորուած, ընդունակ կը լինի ուղղել իր նախորդների սխալը։ Հայ գիւղացիութիւնը, նրա հողատիրական յարաբերութիւնները, նրա տնտեսական-սօցեալական պայմանները կը դառնան ուսումնասիրութեան անհրաժեշտ առարկայ, որպէս զի հնարաւոր լինի նպաստել, աջակցել այն բոլոր գործօններին, որոնց շնորհիւ իր բնական ուղու վրայ կանգնի գիւղացիական դասակարգի սօցեալ-տնտեսական զարգացումը, նրա քաղաքացիական վերածնութիւնը՝ մի դասակարգի, որ իր էութեամբ Կովկասի հայ պրօլետարիատի ստուար մասն է կազմում։

Ն. ՍԱՄՈՒԷԼ

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Հայ-Թուրքական ընդհարումները պարզաբանելու և եղբայրասպան այդ պատերազմին մի վերջ տալու համար—համաձայն փոխարքայի ցանկութեան Թիֆլիզում կայանալու է մի համաժողով բաղկացած հայ և Թուրք ժողովրդի կողմից ընտրած ներկայացուցիչներից։

Համաձայն վեհափառ կաթուղիկոսի կարգադրութեան պատգամաւորների ընտրութիւններ կատարելու համար ծխական ժողովներ են հրաւիրւում. չգիտենք ինչպէս են կատարւում այդ ընտրութիւնները ուրիշ քաղաքներում, սակայն Թիֆլիզում կայացած ծխական ընտրութիւններին, ուր մասնակցում էի ես նկատեցի հետեւեալը.

Այս ծխական ժողովին մասնակցեցին միմիայն 17 հոգի ծխականներ, (երկրորդ ժողովն էր) որոնք իսկոյն ձեռնարկեցին ընտրութիւնների—առանց որ ծխականները արտայայտէին իրանց կարծիքը, թէ ինչ են համարում նրանք հայ-Թուրքական ընդհարումների պատճառ և ինչպէս կուզէին, որ դրան վերջ տրւէր։ Ծխական պատգամաւորը չիմանալով ընտրողների կարծիքը և ցանկութիւնը, կզործէ այնպէս, որպէս ինքն է մտածում և յարմար համարում։

Դա իմ կարծիքով մեծ սխալ է, մանաւանդ, երբ հարցը այդքան փափուկ է և վիճելի,—ահա թէ ինչու, մեր կարծիքով, անհրաժեշտ է ծխական նոր ժողով նշանակել, ուր ծխականները արտայայտէին իրենց հայեացքը և պարտաւորեցնէին ընտրածներին իրենց ցանկութիւնների թարգման հանդիսանալ այն ընդհանուր ժողովում, ուր պէտք է ընտրւեն Թիֆլիզի կողմից չորս պատգամաւորներ խորհրդակցութեանը մասնակցելու։

Միայն այդպիսի եղանակով ընտրւած պատգամաւորները կարող են համարւել իսկական ներկայացուցիչներ ժողովրդի կողմից։

ԾԽԱԿԱՆ

—

## ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ

Լրագիրները նորից լցւեցին հայ Թուրքական ընդհարումների նկարագրութիւններով։ Ցարձակումներ և կոտորած տեղի ունին Զանգեզուրի և Շուշուայ գաւառների շրջանում։

Շուշուց խփած մի հեռագրից իմանում ենք, որ Թուրքական շարժումների գլխաւորներն են Նաջաֆ-Կուլի աղան՝ Շուշու գաւառում, Իւզբէմ բէկը—Զանգեզուրում և Հիւսէյին բէկը Ջիբրայիլում։

Երեքն էլ խոշոր կալուածատէր են, երեքն էլ ազնուականներ, ինչպէս միշտ և ամեն տեղ՝ հայ Թուրքական աւերածութիւնների մէջ..

Հաւանական է, որ դրանք էլ ընտրւեն փոխարքայի խորհրդում առաջարկելու այն միջոցները, որով երկիրը կարելի է խաղաղացնել...

Միշտ նոյնը և նոյնը...

—

«Նովօե Օբօզրենիէ» թերթը մի մասնաւոր նամակից որ ստացւած է Սարատովի նահանգից, հաղորդում է «Սարատովի նահանգում հողային շարժման պատճառով այրւած և թալանւած են մատնւած 700 կալւածներ։ Հրդեհը բռնել է բոլոր գաւառները. խուտորինչիւր գիշեր երեւում է 3—4 գիւղում հրդեհի բոցերը։

Եթէ աչքի առաջ ունենանք, որ հողային շարժումը տարածուել է աւելի քան 26 նահանգներում—պարզ կլինի աւերումների ոսկայի պատկերը և զինւորական ույժի քանակը, որով մտածում են հանգստացնել երկիրը։

—

«Մշակի» № 5-ում պ. Հ. Առաքելեան մի յօդւած է նուիրել հոգեւորական հայ պաշտօնեաների ժողովրդից ընտրւելու խնդրին, այդ յօդւածը վերջանում է այսպէս «Ազգի և եկեղեցու կենսական շահերը պահանջում են, որ թէ առաջնորդները, թէ յաջորդները, թէ սինոդի և թէ կոնսիստորեաների անդամները (մենք կաւելացնենք՝ և քարեկարգիչները՝ ամեն տեղ) ընտրւեն ժողովրդի քուէարկութեամբ և ոչ թէ նշանակւեն։ Ժամանակ է, որ հոգևոր բարձր իշխանութիւնը լռացութեամբ այդ պահանջին և լռայութեամբ անմիջապէս, թէ չէ կամենում մի վիհ փորել իր և ժողովրդի մէջ։ Այդ պահանջի իրագործումը անյետաձգելի է այժմ մանաւանդ, երբ եկեղեցական գոյքերը և դրամագլուխները վերադարձնւում են և պէտք է որ նրանց մատակարարութեան և կառավարութեան գործը այլ ևս չդտնւի լոկ հոգևորականների ձեռքում։

Հետաքրքիր է՝ ինչ են մտածում Առաջնորդարանում «անյետաձգելի» պահանջի մասին...

—

«Одесскій Листокъ» № 2-ում տպւած է հետեւեալ հեռագիրը Թիֆլիզից. «Тифлисскій Листокъ» «Новое Обозрѣніе» «Возрожденіе» «Рабочій Листокъ» որպէս և տեղական լեզուներով հրատարակւող թերթերը դարձան յեղափոխական ուղղութիւն ունեցող թերթեր, որոնք ապստամբութեան էին հրաւիրում հասարակութեանը, մինչև որ շնորհիւ գրաշարների գործադուլի չդադարեց նրանց լոյս տեսնելը։

Ինչ վերաբերում է տեղական հայոց լեզւով լոյս տեսնող թերթերին, կարող ենք երդւմով հաւատացնել Օդեսսկի Լիստոկի խմբագրութեանը, որ հայ թերթերից և ոչ մէկը յեղափոխական չէ եղել—նրանք բոլորն էլ Սահմանադրական են՝ այս կամ այն հաճելի նիւանսներով։

digitised by A.R.A.R.@

*Ռուս «Молва» թերթը, յիշելով անցեալ յունվարի 9-ի արիւնալից դէպքը, երբ հարիւրաւոր անմեղ զոհեր Պետերբուրգում իրենց արիւնը թափեցին, որովհետև միամտօրէն հաւատում էին Բարձր Արդարութեանը, վերջացնում է իր խօսքը այսպէս՝*

*«Միթէ յունվարի և դրան յաջորդող օրերը պարզ ցոյց չ'տուին բոլորին և նոյն իսկ կոյրերին, որ արիւնով ժողովրդի ազատարար շարժումը հանգցնելու փորձը միևնոյն է թէ փորձել նաւթի տակառներով հանգցնել դինամիտի պահեստում առաջացած հրդեհը։*

*«Միթէ, բացականչում է լրագիրը, անցեալի ցաւալի փորձերը բաւական չեն և մենք պէտք է շարունակենք ապագայի համար պատրաստել նոր, աւելի սարսափելի «օրեր»...*

*Երևում է, որ թերթը դեռ հաւատը չի կորցրել, հաւատը, որ մնաց 1905 թ-ի յունվարի 9-ից յետոյ։*

—

*Մեզ հաղորդում են «Ալէքսանդրապոլում հայկական ներկայացումները շարունակւում են ուրախ և արդիւնալից...*

*Երբ Ալէքսանդրապոլը ուրախանում էր սկնչեւ երկաթուղին—դա հասկանալի էր, բայց երկաթուղի անցնելուց յետոյ, մեր օրերում—դա կամ թիւրիմացութիւն է կամ... յետամնացութիւն։*

—

*Լրագիրները որպէս հաւաստի լուր հաղորդում են, որ Պարսկաստանում մտցնւում է սահմանադրութիւն. «պատգամաւորական ժողովը» կազմւած պէտք է լինի հոգևորականներից, վաճառականներից և կալուածատէրերից (դարձեալ հոգևորականներից) թւով 40 հոգի, նախագահութեամբ Շահի. պարլամէնտը կոչւելու է «Արդարութեան տուն» և զբաղւելու է պետական գործերով և օրէնսդրութեամբ։ Օրէնքները համաձայն Շահի հրամանի պէտք է լինեն հաւասար բոլոր հպատակների համար»։*

*Կասկածում ենք, որ այս սահմանադրութեան հեղինակն էլ Կոմս Վիտտէն լինի, յամենայն դէպս ուրախալի է, որ Պարսկաստանում արդարութիւնը ունենալու է վերջապէս մի «տուն»...*

—

*Մոսկւայում կայացել է այս օրերս ազնւականների պարագլուխների համաժողով, ուր ներկայ են եղել մօտ 100 հոգի. համաժողովը կայացրել է մի շարք որոշումներ. ի միջի այլոց հողային հարցի առթիւ որոշել է որ կառավարութիւնը իրաւունք չունենայ մինչև պետական Դումայի գումարումը օրէնսդրական ճանապարհով որ և է օրէնք մտցնել։ Բացի այդ, ազնւականները յայտնել են իրենց անվստահութիւնը դէպի Կոմս Վիտտէի բռնած քաղաքականութիւնը»... Ազնւականների ընդունած որոշումների մէջ, պէտք է ասել, որ այս որոշումը միակ ազնիւն է։*

—

*Նիժնի-Նովգորոդից հեռագրում են մայրաքաղաքի թերթերին*

*«Աչքի առաջ ունենալով, որ յունւարի 9-ից դըպրոցներում սկսւելու են պարապմունքները, գեներալ-գուբերնատորը յայտարարեց՝ այն բոլոր դէպքերում, երբ աշակերտները դպրոցներում կարգը խանգարեն-աշակերտների և նրանց ծնողների դէմ գործ կածւեն ամենախիստ միջոցներ-այսինքն կքշւեն [illegible] նահանգի ամենահեռաւոր ծայրերը և կ՚յանձնւեն ոստիկանութեանը։*

*Ահա ինչ կնշանակի «երկրի դրութեան հետ անծանօթ լինել—ադմիրալ Դուբասով դեռ եռ դեկտեմբերին 300 անչափահաս աշակերտներ—ուղղակի բանտը դրեց։ Բիւրօկրատները միշտ ուշանում են...*

—

«Кавказское Сельское Хязяйство» *շաբաթաթերթի խմբագրական մասնաժողովը որոշել է ժամանակաւորապէս դադարեցնել թերթի հրատարակութիւնը, նիւթական միջոցների պակասութեան պատճառով։ Նոյնպիսի բնական մահով մեռնում է իւրաքանչիւր մի ծառ, որի արմատները աւազի մէջ են ամրացած, և որը բիւրօկրատական նեցուկներով ու «նպաստներով» էր պահպանւում։*

—

*Խմբագրութիւնս որոշել էր իր ընթերցողներին ծանօթացնել Ռուսաստանում կատարւող կարևոր երևոյթների հետ, որ բերում են հեղափոխական գործակալութիւնները. սակայն աչքի ունենալով ամեն օր ստացւող լուրերը, ներկայ դրութիւնը կարող ենք ամփոփել այսպէս՝ ձերբակալում են, բանտարկում են, զօրք են ուղարկում, դատում են, աքսորում են և այսպիսով կարգ ու անդորրութիւն են հաստատում։*

## ԲԱՌԱՐԱՆ

—

*Աչքի առաջ ունենալով, որ «Աշխատանքի» մէջ պատահում են բառեր, դարձւածքներ, որոնք մեր «տգէտ» ընթերցողների համար կարող են անհասկանալի լինել, մենք ստիպւած կտանք դրանց բացատրութիւնները։*

*Գիւղացի—գիւղում ապրող մի կենդանի, որին ամեն բանից զրկել են, սխալմամբ թողնելով միայն եղջիւրները։*

*Մամուլ—գողեր բռնելու և բանտարկելու մի խորամիտ թակարդ։*

*Կուսակցութիւն—մարդկանց մի խումբ, որը միջոց ունի հրապարակ դուրս գալ միմիայն ազգային եռագոյն դրօշակով։*

*Պետական Դումա—Կազեմնի մի դահլիճ, ուր Սատր-ծով, ժողովւելու են «ընտրեալները» երեք ամիս շարունակ լսելու «Բիւրօկրատիայի գործունէու-*

digitised by A.R.A.R.@

թեան յանցագործ պատմութիւնը։ Որոշուած է կարգ և հանգստութիւն չը խանգարելու համար, վիճաբանութիւնները յետաձգել յաջորդ տարուան։

Ազատութիւն—Հոկտեմբեր 17-ին ծնուած մի մանուկ, որին ինքը կնքահայրը խեղդեց մի օրական հասակում։

Մինիստր—25—40 հազար րուբլի տարեկան ռոճիկ ստացող միապետներ՝ Սահմանադրական Ռուսաստանում։

Անձի անձեռնմխելիութիւն—տես՝ բանտարգելութիւն, խուզարկութիւն և բռնութիւն բառերը։

Զրահաւոր—Բրօնենոսեց Ռուսական պատերազմական նաւի մի տեսակ, որ ծովի յատակները ուսումնասիրելու էր ուղարկուած։

Խորհարան—Քաղաքացիական դիմացկանութեան աստիճան որոշելու հրաշալի գործիք։

Թոյլիսան «Ներքին թշնամիներին» սրտանց սիրող մարդիկ, որոնք ծնուեցին Պլեվէյի օրով և զարգացան այն օրից, երբ Ռուսաստանը յայտարարուեց Սահմանադրական։

Բոյկոտ—Ձեռքերը, տրամադրութիւնը և մանաւանդ օդը միշտ մաքուր պահող փորձուած մի միջոց։

Վիտտէ Հոկտեմբեր 17-ի ազատութիւնների խնամատար կնքահայր (տես ազատութիւն բառը)։

Բանտ Մտքի արգելուած գերանոցն մի գոյականի, որին վճռուած է կախաղան բարձրացնելու... Պետական Դումայում։

Սահմանադրական—Դեմօկրատ մարդ որի գոյնը ոչ կարմիր է, ոչ սև և աւելի մոխրագոյն. յաճախ դէպս դրանցից «հարիւրեակներ» կազմել կարելի է։

Բուրժուա—տես՝ Սահմանադրական-դեմօկրատ և կուսակցութիւն բառերը։

Կազակ—տես Համիդիէ։

Համիդիէ—տես կազակ։

Ռումբ—տօն և կարևոր օրերում խուլիգաններին բաժանուող մի խաղալիք, որից յետոյ որպէս զուէշտ սկսում են փորձել տների ճարտարապետական ամրութիւնը՝ թնդանօթների միջոցաւ, քաղաքացիների քաջութիւնը՝ կոտորածի և զինուորների պատերազմական ոգևորութիւնը։

Յեղափոխութիւն—լուսաշխարհին տեսած խառն երազներ, որոնց մասին «Երազահանում» ասուած է «երազն այդ՝ առաւօտն խակ կատարվի»։

Գեներալ—Գուբերնատոր—կարգ, կանոն, արդարութիւն վերահաստատող սրտացաւ զինուորականներ՝ օրինակ գեն. Ալիխանով, Տակայշվիլի, Բորրիկով և այլք. դրանց լաւ տեսակը՝ ժամանակաւորներն են։

(Կը շարունակուի)

ՍՏՈՐԱԿՏ

---

## ՀՈՂԻ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐ

### (Պատկերներ գիւղից)

Անտառ մտնելուն պէս, երկինքը պարզուեց։

Ամպերը չը ցրուեցին, ոչ։ Կապարի նման ծանրութիւնը միայն փարատեց բարձրում. փոթորիկ գուշակող մռայլ կերպարանքիցն ազատուեց երկնակամարը։

Գետից յետոյ, վայրենի խնձորենիների, տանձենու և կաղնիների մի խառնուրդ՝ եզերում էր անտառի կուրծքը մխրճուող շաւիղին։

Այնքան դրաւիչ էր ցածում փռուող հեռանկարը, որ մի քանի րոպէ կանգ առինք բարձրութեան վրայ և զննելու մնացինք հօրիզոնի կանաչ կապած դաշտը։

Մեզ հետ կային մի քանի գիւղացիներ։ Մեկին էր իր ճակատի տակի հայեացքով և խափունջու մէջ պարուրուած. յետոյ՝ մեր տանտիրոջ որդին—Գրիշօն, այլ և այն երկարահասակ ու նիհար Թևոսը, որին գիւղում «ուզուն ախմախ» (երկարահասակ տխմար) էին կոչում։

Թէոսն այդ օր իր ամբողջ եռանդն էր ցոյց տալիս մեզ օգնելու և առաջնորդելու մէջ։ Ցիմար ժպիտը դէմքին, խնքնակոչ կերպով առաջնորդութեան դերը ստանձած՝ քայլում էր առջևից, գետի հունը ցոյց տալիս, շալակեց ինձ ու ջրիցն անցկացրեց, երեխաներին ամբողջ ժամանակ գրկած տարաւ, իսկ երբ գետն էինք անցնում, աւելի գործունեայ, դառնում էր աջ ու ահեակ.

—Աղա, ո՞ւր ես կանգնել, քոռ Գրիշօ, չե՞ս կարում երեխաներին դէպը բերի... Կա՛ց, պ. Եբուանդ, կոշիկդ մի՛ հանի... ա՛յ, արի մէջքիս վրայ ընկի՝ տանեմ քեզ... Կացէք, կացէք, խանումներ. հրէն գոմշի ուէլ ա գալիս. վրէն կը նստացնեմ ու ջուրը անց կը կենաք...

Ու երբ անտառն էինք մտնում այդ բոլորից յետոյ, կանգ առաւ մի խնձորի ծառի տակ, ձեռքը տարածելով մեծ շրջան գծեց օդումն ու ասաց ինձ.

digitised by A.R.A.R.@

—Հրէս ա, սա ա Մելիքի զափթած հողը…

—Աղա ուզուն ախմախ, կանչեց նրա վրայ Մելիքը բարկացած—զափթածս որն ա… էն ա իմ հողն ա, էլի. երեք տարի ա, համ չուխով վարում եմ, ակօսներ քցում մէջը, հողը շուռ տալիս, համ դիփ էդ վէրի (վայրենի) խնձորտեքանց վրէն պատրուանի եմ արել, համ էլ տէ, էն ձորումը ընէնց կաղնքի եմ կտրտել-ցած քցել, որ ամէն մէկը 10—15 մանէթի տախտակ կը հանի… Հողն իմն ա, որ կայ. հասկընում էք… Ինչուք հմի, էն ա շտրափ ա (տուգանք) որ տալիս եմ… Հրէս մի քանի օրից յետոյ էլ կը հաստատուի ինձ վրայ՝ կը պրծնի…

Այդ բոլորը ասաց Մելիքը ձեռքի լայն շարժումներով, եափնջին եա քաշած ու իր հողի սէջ—տեղը կանգ առած.

Ապա, երբ պրծել էր, մօտ եկաւ ինձ, եափունջին հանեց, ծալեց. ուսի վրայ նետեց ու աւելացրեց.

—Գնանք, պ. Երուանդ, տես թէ ճնց հող ա… քէփդ կը գայ… Կուզես տամ քեզ, մէջը ծառ քցի, վարի, ցանի… Մենակ 200 հատ խնձորի կայ մէջը. ընէնց կաղնքի ցոյց տամ, որ բերանդ բաց մնայ… Դիփ կտրատելու եմ, որ ջառմանները տամ… Բա ճնց, ինձ ջառմայով կը վախացնե՞ն… ընչի՞ պտի ջրիմա տամ. էն ա կը տամ մի-երկու կաղնքի վեր կը քցեմ, կը քշտեմ, կը ծախեմ ու ջառման էլ կը հանեմ, մէկ բան էլ աւել…

—Իսկ եթէ վրայ հասնեն ու կտրտած ծառերը տեսնե՞ն…

—Ո՞վ, աբէ՞շչիկը[1])… Տօ հրէն է. մէկէլ օրը ըստեղ մենք խորոված էինք ուտում ու գինի խմում, կողքներիս էլ մէկ կաղնի ծառ խըփում էին ցած քցում… եանի աբէշչիկը որ կայ, իմ նօքեարը չի, քի՞չ ա ինձանից խէր տեսնում… համ կաշառք, համ քէֆ…

—Բայց եթէ ինքը—անտառապետը տեսնի.

—Լեսնիչի՞ն…[2]) Նա սկի գալի՞ս որ էս կողմը… Տեսնայ էլ. ի՞նչ կանի… ես ինչ գիտեմ ով ա կտրել, աբէշչիկը չի տեհել—չի իմանում… գողացել են…

Պարզ էր այժմ. Մէլիքը կատարեալապէս իր կողմն էր քաշել անտառի պահապանին և այս ու այն ձևով՝ յաջողել էր պետական անտառին եզերող հողերից մօտ 4 դեսեատին գրաւել. Նախ մէկ՝ չուխով ակօս էր գծել նրա շրջապատը, յետոյ՝ ցախով կարճ շրջափակ դրել, հետզհետէ, հեռաւոր, խուլ կողմերից սկսած՝ ծառեր էր կտրտել, խնձորենիները պատուաստել… Մի խօսքով հողին տիրացել էր ու դատաստանական վճիռներից խուսափել էր տուգանքներով, աւելի շատ՝ կաշառքներով…

Մնում էր մի բան. Դատի պիտի կանչէին, քննութիւն բանային. Եւ ինչ պիտի երեւան գար. Որ Մելիքը 3 տարի ամբողջ այդ հողը մշակել էր, ծառերը կտրտել, նոր ծառեր տնկել, հողին գործնականապէս տիրացել. Մի լաւ տուգանք—և հողը պիտի մնար Մելիքին… անշուշտ կաշառքների ուժով.

Մենակ խօ Մելիքը չէր. Ամբողջ Դուզանը այդպէս էր ընդարձակում իր հողերը. Ճար չը կար. Գիւղը մեծանում էր, բազմամարդ դառնում, իսկ 50 տարի առաջ տրուած հողից աւելին չէին ուզում տալ նրան.

Մնում էր գողանալ. Եւ գիւղացիք արդէն մօտ 60 դեսեատին հող խլած, այժմ մտնում էին անտառի կուրծքը, գրաւում էին բացւածքները.

—Դա գողութիւն է. բարբաջախօսեցի ես.

Մելիքը ժպտեց, հրաւիրեց մեզ նստել մի ծառի ընկած կոճղի վրայ, հրամայեց Գրիշօին, որ խանումների նստելու համար եափունջին գետին փռի, յետոյ պահ մի պապիրոս շինեց ու ասաց.

—Ըստի մտիկ տու՝ ինչ կասեմ, պ. Երուանդ… Դու գիտնական, կարդացող մարդ ես… Դու քո Աստուածը՝ դրուստն ասա. էդ երկինքը, ես էդ արեգակը (որ չի էլ ըրևում հմի) եա էդ օդն ու ջուրը, հէնց էդ փշերն էլ հետը՝ ովի՞նն ա…

—Ամենքինը.

—Շատ ապրես… դուրս ա գալիս, որ օդն ու արևը ոչ ոքինը չի… համ էլ՝ ամենքինն ա… Աստուծունն ա, Աստուած էլ ամենքի համար ա, նրա տուածն էլ ամենքի համար… ըտէնց չի՞.

—Այդպէս է.

—Աստուած էլ տուել ա մարդկանց, որ վայելին… Բաս որ յանկարծ դու վեր կենաս ու գոռով էդ ամենը խլես ինձնից, ասես որ քոնն ա. դիփ էլ զափթես, որդոց-որդի սկի մէկին չը թողաս որ մօտ գայ… էն վախտը ես ինչ պիտի անեմ…

[1]) Անտառի պահապան.
[2]) Անտառապետ.

digitised by A.R.A.R.@

—Այդ է ինչպէս կարելի. ոչ արևը կարելի է զափթել և ոչ էլ օդը։

—Ինչի՞ չի կարելի. ծիծաղեց Մելիքը—այ, բոլէնց չորս պատ կը քաշեմ, եա փոս կը փորեմ, քեզ մէջը կը դնեմ... ու ոչ արև կը տեննաս, ոչ էլ օդ կը ծծես... էլա՜...

—Եղաւ, ճիշտ ես ասում... Ցետո՞յ...

—Ցետոյ էլ ինչ... եանի որ զորթանց քեզ բոլէնց անեմ, դու ինչ կանես։

—Բայց դա անիրաւութիւն կը լինի. օդից ու արևից չէ կարելի զրկել ոչ ոքի...

—Կարելի ա... Զօռի բանն չի՞... գլխից խփելն ու փոսի մէջ քցելը մէկ կը լինի... հա դու գոռա, հա դու լաց ըլի, եա զանգատ արա... զօռն իմն ա՝ ինչ ուզ՝ մ-կանեմ։ Ամա ասելիքս էն ա որ, թէ էգ փոսում եղած վախտդ, բան ա, մէկ ծակ բաց արիր, որ օդ ու արև ստանաս մի քիչ—դու կըլես գող...

—Խելօք չես խօսում, Մելիք։

—Շատ էլ խելօք եմ խօսում... Դու ջուղա՞բ տու, ընչի՞գ ա... Հյա մէկ ջուղաբ տու... Հը, որ ծածուկ, իմ քնած վախտը, եա մէկ ընէնց ֆանդով՝ բանտից պատը ծակես, օդ ու արև գողթես, որ չը մեռնես—դու կըլես գող...

—Ո՛չ ի հարկէ. ամեն մարդու իրաւունքն է ապրելը, հետևապէս իրաւունք՝ օդից ու արևից վայելելը։

Մելիքը, չը նայելով որ ես ակնարկս դէմքին ուղղած՝ սպասում էի, ոչինչ չ'ասաց. միայն մի քմծիծաղ տւաւ և սկսեց պապիրոս ծխել։

Ցետոյ, երբ մի րոպէ լռութիւն էր տիրում, դարձաւ կողքին ցցւած Թէոսին ու ասաց.

—Աղա, Թէօս, քանի՞ ջան օղլուշաղ ունես.

—Հինգ, Մելիք, հինգ ջան.

—Քանի՞ օրավար հող ունես.

—Սկի քանի. էրկու օրավար, մէկ էլ մի պստիկ, բռանս չափ բաղ, մէջը մի-երկու բալի ծառ։

—Քանի՞ կտտ ցորեն ես կալսում.

—Գի՞ժ ցորեն.

—Հա, հենց գիժը...

—Տարին գիտայ... շատ քիչ...

—Բա ո՞նց ես ապրում, օղլուշաղդ կերակրում.

—Լօքի ենք ուտում, խոտ, բանջար... գիժ հացն էլ՝ էն ա մեզ սպանում ա... թէ բանելու գործ էլաւ, էն ա մի կերպ եօլա ենք գնում, քաղցած սոված...

—Ցիմար ես, ընդուր... վերջացրեց խստութեամբ Մելիքը և դարձաւ ինձ նայեց։

Ահա այդ իսկ միջոցին էր, որ ցածից լսւեց անիւների դղրդիւն և մի երկար կառք, մէջը լիք պաշտօնեաներ, ռուս կանայք, երեխաներ՝ եկաւ ու սլանալով անցաւ մեր կողքից։ Կանանց ու երեխաների քըքիչը, տղամարդկանց ուրախ ծիծաղները ու երգերը սփռւեցին կառքի անցած ճանապարհի վրայ և անլսելի դարձան միմիայն 5—10 րոպէ յետոյ, երբ այդ բոլորը ծածկւեց-անհետացաւ եղևնիների ետևում։

Մելիքը, որ կառքը տեսնելուն պէս վեր էր թռել և գլխարկը հանել—գլխաբաց մնաց մինչև անհետանալը։ Ցետոյ, դարձաւ ինձ, ծածկեց գլուխը, նստեց ու ասաց.

—Լէսնիչին էր... Քէֆի են եկել... Լաւ ա, որ երէկ խաբար էին տւել. մէկ ոչխար գլխել են արէշչիկին...

(Կը շարունակւի)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

## ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Անցեալ նոյեմբերի 5—12-ը Մոսկւայում տեղի ունեցաւ «Համառուսական Գիւղացիական Միութեան» համաժողովը։ Համաժողովին մասնակցում էին Ռուսաստանի 144 գիւղական համայնքների բազմաթիւ ներկայացուցիչներ. ի միջի այլոց ներկայ էին մեծ թւով զեմստւային գիւղատնտեսներ, բժիշկներ, ստատիստներ և գիւղացիական շահերին մօտիկ կանգնած հասարակական յայտնի գործիչներ։

Համաժողովը եօթնօրեայ զբաղմունքներից յետոյ կայացրեց մի շարք որոշումներ, որոնցից մենք առաջ կը բերենք հետևեալ հինգ կէտերը.

1. Ժողովրդի թշւառութիւնը, որ առաջ է գալիս հողի պակասութիւնից, կարելի է վերջացնել միայն այն դէպքում, երբ ողջ հողը կդառնայ ժողովրդի սեփականութիւն, այն պայմանով, որ նրանից օգտւի միայն նա, ով ինքը իր ընտանիքով և կամ ուրիշների ընկերակցութեամբ կ'մշակի հողը։

digitised by A.R.A.R.@

2. Անխախտ կերպով, արդար և ժողովրդի կամքի համեմատ—օրէնսդրական ճանապարհով հողային հարցը լուծել կարող է միմիայն Սահմանադիր ժողովը, որը գումարելու է պետութեան հիմնադիր օրէնքները կազմելու համար։ Հիմնադիր օրէնքները պէտք է սահմանուեն ընդհանուր, գաղտնի, հաւասար և անմիջական ընտրութեան եղանակով, առանց սեռի, ազգութեան և դաւանանքի խտրութեան պատգամաւորների միջոցով, որոնք ընտրուած կլինեն 100 հազար ազգաբնակութեան կողմից մի հոգի և այդ՝ ոչ ուշ 1906 թւի փետրւար ամսից։

3. Հիմնադիր ժողովի առաջնակարգ գործը պէտք է լինի հողային խնդրի լուծումը՝ համաձայն ժողովրդի պահանջների։

4. Որպէս զի հնարաւոր լինի իրագործել Սահմանադիր ժողովի գումարումը անհրաժեշտ է որ ա) Ռուսաստանի ողջ գիւղացիութիւնը միանայ «Գիւղացիական Միութեան» մէջ բ) համաձայնութեան մէջ մտնել մեր միւս եղբայրների՝ այսինքն քաղաքների բանւորների, գործարանական, երկաթուղային և այն բոլոր կազմակերպութիւնների հետ, որոնք պաշտպանում են աշխատաւոր դասակարգի շահերը։

5. Ի նշան այն բանի, որ գիւղացիական միութեան համաժողովին մասնակցող պատգամաւորներս մեր սկսած այս գործի վրա նայում ենք որպէս ողջ գիւղացիութեան համար սրբազան մի գործի, համաժողովը որոշեց՝ դադարել գինի և սպիրտային այլ խմիչքներ գործածելուց։ Թող հողի և իրաւունքի համար կռւող գիւղացիութիւնը լինի միշտ զգաստ։

(Сынъ Отечества)

---

## ՀԱՐՑԵՐ «ԱՇԽԱՏԱՆՔԻ»

1) Ի՞նչ դրութեան մէջ են աշնանացանները ընդհանրապէս

2) Գարնանը գարնանացանի համար սերմի պակասութիւն որ տեղերում է զգացւելու։

3) Ի՞նչ դեր են կատարել հայ թուրքական ընդհարումների ժամանակ թուրք կալւածատէրերը, բէկերը, խաները, ովքեր են դրանցից ընդհարումների առաջնորդները և խրախուսողները և որտեղ են դրանց կալւածները։

4) Ի՞նչպէս էր իրեն պահում ընդհարումների ժամանակ տեղական և կալւածական կամ կապալով վերցրած հողերում ապրող թուրք աղքատ գիւղացիութիւնը։

5) Կենսական մթերները ինչ գնով են ծախւում այս կամ այն տեղում. օրինակ ցորեն, գարի, ալիւր, խոտ, դարման, կերօսին, շաքար և այլն։

---

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Շնորհիւ մի կողմից փոստային ծառայողների գործադուլի, միւս կողմից տպարանական դժւարութիւնների և երրորդ՝ քաղաքական ներկայ աննպաստ պայմանների, մեզ անհնար եղաւ «Աշխատանքը» լոյս ընծայել յունւարի սկզբին։

Մեր գաւառներից, որ կրակի մէջ է, այժմ են միայն գալիս նամակներ, որոնց հրատարակելը ստիպւած ենք յետաձգել յաջորդ համարներում։

«Աշխատանքը» բացում է հայ գիւղացիութեան և նրա կեանքին ու շահերին մօտ զանւող անձերի համար մի առանձին բաժին «Հարց և պատասխաններ»—վերնագրով։

Դա գաւառի հետ կենդանի և սերտ յարաբերութիւններ հաստատելու միջոցն է, ուր կ'զետեղւեն որպէս խմբագրութեանս տրւած հարցերը իր բաժանորդներին և ընթերցողներին, նոյնպէս և այս վերջինները կդիմեն մեզ իրենց դարդով, վշտով և նրանց հետաքրքրող հարցերով, որոնց պատասխանելը, բաւարարութիւն տալը «Աշխատանքի» առաջին նպատակն է։

Չխօսելով քաղաքների մասին, իւրաքանչիւր նոյն իսկ յետ ընկած հայ գիւղում միշտ կգտնւեն մի կամ մի քանի գրագէտ մարդիկ, որոնք սիրով յանձն կառնեն գիւղացու ցանկութիւնները գրի անցնել և բաց թէ փակ նամակով մեզ հասցնել։

Թող ոչ տառասխալները, ոչ ուղղագրութեան պակասները գրողների կողմից արգելք չըլինեն գրելու մեզ իրենց ցաւի և կարիքների մասին։ Պարզութիւն և անկեղծութիւն մեր և մեր ընթերցողների մէջ՝ միակ գրաւականն է մեր յարաբերութիւնների սերտկութեան և փոխադարձ օգտաւէտութեան։

digitised by A.R.A.R.@

Ուսուցիչները, քահանաները և ինտելիգենցիան գիւղերում և գաւառական քաղաքներում հրաւիրւում են «Աշխատանքին» գործակցութեան՝ թէ գրով և թէ՝ տարածելով ժողովրդի լայն խաւերում «Աշխատանքը», որպէս մեր գիւղացիութեան շահերին եւ ցաւերին մօտիկ միակ թերթ։

Այդ յոյսը ունենալով մեզ քաջալեր՝ մենք երկրի և ազգաբնակութեան կուլտուրական կեանքի ներկայիս ամենատենդոտ պայմաններում — ուղարկում ենք «Աշխատանքի» համարները մեր գործակալներին և բարեկամներին։

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1906 թ.

# „ԱՇԽԱՏԱՆՔ“

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

որ դուրս է գալիս առաջիկայ 1906 թ. յունվար ամսից։

Ծրագիր.—1. Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2. Գիւղական կեանք և կարիքներ. 3. Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4. Զեմստվօ և համայնք. 5. Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6. Գիւղական պրոլետարիատի շարժը. 7. Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8. Թղթակցութիւններ գաւառից. 9. Մամուլի շուրջը. 10. Պատկերներ և զրոյցներ. 11. Հարցեր և պատասխաններ. 12. Շուկայ և տեղեկատու և 13. Յայտարարութիւններ։

«ԱՇԽԱՏԱՆՔ»-ը նուիրուած է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրոլետարիատի շահերին և կարիքներին։

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը, «ԱՇԽԱՏԱՆՔ»-ի ծրագրումն է։

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «ԱՇԽԱՏԱՆՔ»-ի թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու։

«ԱՇԽԱՏԱՆՔ»-ին աշխատակցելու հրաւիրուած են որոշ ուղղութեան մարդիկ։

«ԱՇԽԱՏԱՆՔ»-ը վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

| ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ | | ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ | |
|---|---|---|---|
| Տարեկան | 4 ռուբ. | Տարեկան | 6 ռուբ. |
| Կէս տարին | 2 » | Կէս տարին | 3 ռ. 50 կ. |
| Ամիսը | 40 կոպ. | Ամիսը | 50 կ. |

Բաժանորդագինը կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ. սկզբում 2 ռուբլի. մայիսին՝ 1 ռուբ. և սեպտեմբերին՝ 1 ռուբլի։

«Աշխատանք»-ի բաժանորդագրութիւնը ընդունւում է Թիֆլիզում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում՝ բոլոր գրավաճառների մօտ։ Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала «Ашхатанк». Бебутовская ул., д. № 56. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Aschchatank» Beboutovskaia 56.

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆ

---

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ՅԱՌԱՋ“

հասարակական, քաղաքական եւ գրական

## ՕՐԱԹԵՐԹԻ

Բաժնեգինն է Թիֆլիզում՝ տարեկան 6 ռ. ամսական 60 կ. Թիֆլիզից դուրս՝ տարեկան 7 ռ. ամսական 70 կ.։ Արտասահմանում տարեկան 32 ֆրանկ։

Դիմել՝ Тифлисъ, редакція «Арачъ» կամ Tiflis (Russie) Redaction «Haradj»

ԽՄԲԱԳԻՐ Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Մ. ՆՈՒԼԲԱՆԴԵԱՆ

Տպարան «ՀԵՐՄԷՍ»

Խմբ. հրատ. ԱՇՈՏ ԱԹԱՆԱՍԵԱՆ

digitised by A.R.A.R.@